25.905

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԶՐՈՒՅՑ

1929

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

334.5
Ա-57

Ա
Ca1675
334.5
Ա-57

05 JAN 2010

ԶԱԿՍՈՅՈՒԶ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԶՐՈՒՅՑ

1928/29 ԹՎԻ ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԹԻՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Г.П.Б-ка обяз. экз.
Лнгр. 1930 г.
Акт №

ԶԱԿԿՆԻԳԱ

13.02.2013

25905

Закпотребкооперация за время Советской власти.

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникова
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

59855-66

Թիֆլիս, Ժ.Տ.Բ.Խ. Պոլիգրաֆ. 1-ին տպ., Պլեխանյան պր. № 91. Պատվեր № 1120.
Տիրաժ 2500. Գրառեպ 459։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԱՆ ՄԻՆՉԵՎ ՀՈԺԱՐԱԿԱՄ ԱՆԴԱՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԸ

(1923 թ. դեկտեմբերի 3-ը)

ՄԻՆՉԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1914-1917 թ.թ. իմպերիալիստական պատերազմից առաջացած պարենավորման քայքայումը ավելի սուր և զգալի հետևանքներ ունեցավ Անդրկովկասում, որը վոչ միայն ապրանքները, այլ նույնիսկ հացը միշտ ստանում եր Ռուսաստանից։ Արագ զարգացող շահագիտությունը (спекуляция) ավելի յեր սաստկացնում շուկայի ծանր կացությունը։ Փետրվարյան հեղափոխությունից հետո կազմակերպված պարենավորման կոմիտեները ճգնում եյին թեթևացնել ամենուրեք զգացվող պարենավորման ճգնաժամը։ Յեվ այդ նպատակին հասնելու համար՝ քաղաքներում յեղած ապրանքների սակավ պաշարը նրանք բաժանում եյին ժողովրդին կոոպերատիվների միջոցով։

Ժամանակավոր Կառավարության 1917 թ. մարտի 20-ի որենքի համաձայն կոոպերատիվները հիմնվում եյին հայտարարական ձևով (явочный порядок)՝ առանց կանխաթույլտվության, այնինչ ցարի կառավարության ժամանակ կոոպերատիվ հիմնելու համար պահանջվում եր կառավարության հատուկ թույլտվություն։ Յեվ ահա մենք տեսնում ենք, վոր Անդրկովկասում կազմակերպվում են մի շարք նոր ու նոր սպառողական կոոպերատիվներ՝ միայն ապրանք ձեռք բերելու համար, առանց նախորոք կազմած նախագծի և առանց հաշվի առնելու ֆինանսական հնարավորությունները։ 1917 թ. առ 1-ն հունվարի դրանց թիվը հասնում է 938-ի, իսկ 1918 թ. առ 1-ն հունվարի դրանց թիվը հասնում է 1234-ի։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ հարավային Ռուսաստանում հասունանում եր գեներալական հակա-հեղափոխությունը (Կրասնով, Կորնիլով և Դենիկին), Անդրկովկասում իշխանությունը ժամանակավորապես անցավ մենշեվիկների, դաշնակների և մուսավաթականների ձեռքը։ Անդրկովկասում կազմակերպվեցին յերեք ինքնուրույն պետություններ, վորոնք՝ հյուծված ազգամիջյան զինված պատակտումներից, խզել եյին իրենց փոխհարաբերությունները թե միմյանց և թե Խորհրդային Ռուսաստանի հետ։ Արտաքին առևտուրն ընկավ։ Դա-

դարեց հացի ու ապրանքների ներմուծումը Ռուսաստանից և հում նյութերի արտահանությունը Անդրկովկասից։ Գյուղացիները զրկվեցին նյութերի արտահանությունից, հացից և փողից։ Կառավարությունը չեր վստահանում տուրքեր հավաքել, չնայած վոր նրան փող եր հարկավոր պետական ծախքերի համար։ Սկսվեց անչափ բոնների (боны) տպագրում, որոնց արժեքն որեցոր ընկնում եր։ Կոոպերացիան ապրում եր տագնապալի որեր։ Նրա վարկը ժողովրդի աչքում որեցոր ընկնում եր։ Այդ ժամանակ կուլակներն ու առևտրականները անարգել ընտրվում եյին կոոպերատիվների վարչության մեջ, լինելով կոոպերատիվների նախաձեռնողներն ապրանքի բացակայության ժամանակ, և սովորական կոոպերացիայի դրոշակի տակ դուրս ժողովրդին։

Կառավարության մեջ տիրող շփոթը, քայքայված ֆինանսական դրությունը, կոոպերացիայի աշխատանքների մեջ տիրող պատասխանատվության զգացումի բացակայությունը,—այդ բոլորն աննպաստ ազդեցություն եր թողնում կոոպերատիվների թվի աճման վրա, և կոոպերատիվներն սկսեցին քայքայվել։

1919 թ. առ 1-ն հունվարի նրանց թիվը հասնում եր 1232-ի։
Իսկ 1920 թ. » » » » » » 1091-ի։

Գյուղացիական մասսան յերես դարձրեց կոոպերատիվներից։ Վերջինները գտնվում եյին սնանկության ու խպառ քայքայվելու նախորյակին։ Այդ դրության մեջ գտավ Խորհրդային Իշխանությունը սպառողական կոոպերացիան Անդրկովկասում։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ

Խորհրդային Իշխանության առաջ ծառացավ մի անհետաձգելի և լուրջ հարց. այն է՝ կանոնավորել ապրանքների բացակայության ու սովի հարցերը։ Հարկավոր եր կատարել ապրանքների շուտափույթ վերաբաշխումը, և նրանց հարուստ շրջաններից տեղափոխել անապահով ու կարիքավոր շրջանները։ Սպառողական կոոպերացիան ռազմական կոմունիզմի ժամանակ փաստորեն կատարում է Պարենավորման Ժողկոմատի տեխնիկական ապպարատի դերը, կորցնելով գործառնություններ կատարելու ինքնուրույնությունը։ Ապրանքը բաշխվում եր կոոպերացիայի միջոցով. և այդ պատճառով էլ կոոպերատիվի շրջանում ապրող ժողովուրդը պիտի անդամագրվեր նրան։

Չնայած անդամավճարը մեծ չեր, բայց հաճախ կոոպերատիվների անդամները չեյին մուծում անդամավճարները, և կոոպերատիվները այն հաշվում եյին նրանց տված ապրանքների կամ նրանցից ստացած հում նյութերի դիմաց։ Հասկանալի յե, ի հարկե, վոր այդպիսի պայմաններում անդամների թիվը պիտի աճեր։ Բացի ստացած ապրանքները ժողովրդին բաշխելու գործից՝ կոոպերատիվների աշխատանքը հանգում եր նրանից զանազան հիմնարկությունների պատվերներով հում նյութեր ստանալուն։

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ՆԵՊ-ի) ՇՐՋԱՆՈՒՄ

Յերբ ապրանքների բացակայության ու սովին վերաբերող հարցերի լրջությունը լուծված եր արդեն, 1921 թ. հունիսի 3-ի հրամանով կոոպերացիան ազատվում է Պարենավորման Ժողկոմատի ոժանդակ կազմակերպություն լինելուց և դառնում է բոլորովին ազատ ու ինքնուրույն տնտեսական կազմակերպություն։ Բայց պարտավորեցուցիչ անդամագրությունը շարունակվում եր, և հասկանալի յե, վոր կոոպերացման յենթարկված մասսան որըստորե աճում եր։

1921 թ. առ 1-ն հունվ. անդամների թիվը հասնում եր 1.672.604 մ.
1922 թ. » » » » » » 2.216,318 մ.

Դեռ մինչև Խորհրդային Իշխանությունը՝ կոոպերատիվների վարկը ժողովրդի աչքում խախտված եր։ Իսկ Պարենավորման Ժողկոմատի ոժանդակ կազմակերպության դերում լինելն ստիպեց ժողովրդին կոոպերատիվը համարել առևտրական խանութ։ Վոչ մի հասարակական աշխատանք, ի հարկե, չեր տարվում։ Կոոպերատիվի ամբողջ աշխատանքն ընկած եր վարչության վրա, վորը հաճախ մի հողուց եր բաղկացած։

Թեև վերասուգիչ հանձնաժողովները գոյություն ունեյին, բայց նրանք աշխատանքի վոչ մի նշույլ չեյին ցույց տալիս։ Կոոպերատիվների կենտրոնները (միությունները), վորոնք միացնում եյին սպառողական կոոպերատիվները, իրենք թույլ եյին և անկարող ղեկավարելու կոոպերատիվների գործունեությունը։ Ժողովուրդը չեր նայում կոոպերատիվին, որպես իր հարազատ կազմակերպությանը, այդ պատճառով էլ վարչությունը հաճախ կազմված եր լինում բանվորներին ու գյուղացիներին անհարազատ տարրերից։

Անդրկովկասյան բոնների արժեքի ամենորյա անկումն անհնարին եր դարձնում կոոպերատիվի հաշվառքը, մանավանդ վոր պատրաստված ու մասնագետ հաշվապահներ չկային. իսկ շատ կոոպերատիվներում հաշվապահությունը ուղղակի բացակայում եր։ Հաշվառքի և վերահսկողության բացակայությունը զեղծում-

ների համար հող էին պատրաստում։ Կոոպերատիվների գույքի վատնումն ու յուրացումը, աշխատակիցների անփորձությունը և նրանց անփույթ վերաբերմունքը, արժեքը կորցնող բոնանների ժամանակ ստեղծված աշխատանքի ծանր պայմանները—այդ բոլորը տանում էր առանց այն էլ թուլակազմ կոոպերատիվները դեպի վերջնական կործանումը։

1921 թ. առ 1-ն հունվարի նրանց թիվը հասնում էր 1071-ի.
1922 » » » » » » » » 917-ի.
1923 » » » » » » » » 717-ի.
1924 » » » » » » » » 266-ի։

Մանավանդ ծանր էր Անդրկովկասյան սպառողական կոոպերացիայի համար 1923 թիվը։ Այդ տարին անդրկովկասյան բոնանների արժեքի անկումը անասելի արագությամբ էր կատարվում։ Այն բոնան, որը տյսոր չերվոնեցի հանդեպ արժեր 10 ռուբլի, վաղը նա գնահատվում էր արդեն 9 ռուբլի չերվոնեցով։ Կոոպերացիան իր առևտուրը բոնաններով էր անում։ Ցեվ այդ իսկ պատճառով նրանք մեծ ֆլասներ էին ստանում, քանի որ բոնանները՝ ստանալու րոպեյից մինչև բանկը հանձնելը՝ կորցնում էին իրենց արժեքը։ Այդ յերևույթը ավելի ծանր հետևանք էր ունենում գյուղկոոպների վերաբերմամբ։ Վերջինները կենտրոնից հեռու լինելով՝ ստիպված էին մի քանի որ պահել ծախած ապրանքի դեմ ստացած բոնանները, և այդ մեծ ֆլասներ էր հասցնում նրանց։ Այդ ֆլասների չափը շատ անգամ հասնում էր 50%-ի, այն է՝ 10 ռուբլուց կոոպերատիվը կորցնում էր 5 ռուբլի։ Պարզ է, որ այդ դրությունը զեղծումների և անբարեխիղճ վերաբերմունքի հետ միասին կրստաբեր պիտի լիներ կոոպերացիայի համար։ Ցեվ իսկապես կոոպերատիվները մեկը մյուսի յետևից սնանկանում էին։ 1924 թ. սկզբին անդրկովկասյան բոնանների շրջանառությունը դադարեցվեց, և բոնաններին փոխարինեց մեր կայուն վալյուտան՝ չերվոնեցը։

Բայց վորպեսզի կարելի լիներ կենդանացնել կոոպերացիան, աշխուժություն ներշնչել նրան և ակտիվ աշխատանքի քաշել աշխատավոր մասսաներին—անհրաժեշտ յեղավ քննության յենթարկել և փոփոխել հին կանոնադրությունը։ Ցեվ ահա 1923 թ. դեկտեմբերի 23-ին հրատարակվում է աշխատավոր մասսաների կոոպերատիվին հոժարակամ անդամագրվելու որենքը։ Ցեվ այդ որից խորհրդային սպառողական կոոպերացիան մտնում է իր անտեսական և հասարակական զարգացման մի նոր շրջան։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1924 ԹՎԻՑ ՄԻՆՉԵՎ 1928 ԹԻՎԸ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1924 թվի հունվարի 1-ը Խորհրդային սպառողական կոոպերացիայի սկիզբն է Անդրկովկասում։ Այդ միջոցին անդրկովկասյան սպառողական կոոպերացիան ուներ 266 սպառ. ընկերություններ՝ 868 բաժանմունք-խանութներով։

Մեծ մասամբ դրանք մի քանի սնանկացած սպառ. ընկերությունների թույլ կազմակերպություններ էին։ Անդամագրված հոժարակամ անդամների թիվը հասնում էր ընդամենը 118.889 հոգու. և դրանց մեծ մասը քաղաքացիներ էին։ Գյուղացիական սպառ. ընկերությունների անդամների թիվը հասնում էր 42.345-ի։ Գյուղացիության մեացած մասը կասկածով էր վերաբերվում դեպի կոոպերացիան և դեռ ևս հավատ չէր տածում դեպի նա։ Սպառողական կոոպերացիայի ղեկավարները պետք է գործադրեին յերկարատև ու ծանր աշխատանք՝ վերականգնելու նրա վարկը ժողովրդի աչքում և գրավելու վերջինիս դեպի կոոպերացիայի շարքերը։ Ցեվ Անդրկովկասյան կոոպերացիային հաջողվեց այդ դժվար հարցին ընդհանուր առմամբ տալ դրական լուծումն։

ԿՈՈՊԱՆԴԱՄՆԵՐԻ ԹՎԱԿԱՆ ԱՃՈՒՄԸ

Սպառողական կոոպերացիայի անդամների թիվը տարեց տարի անընդհատ աճում է, որը պարզ յերևում է հետևյալ աղյուսակից.

Աղյուսակ № 1.



Վերջին յերեք տարվա թվերը ցույց են տալիս սպառ. կոոպերատիվների անդամակցության անդադար ուժեղացումը, վորը պարզվում է հետևյալ թվերից.

1925-6	*տնտ.*	*տարում*	*անդամագրվել*	*են 123.190*	*հոգի*
1926-7	»	»	»	» *148.017*	»
1927-8	»	»	»	» *178.345*	»

վորը բացատրվում է գլխավորապես մասսաների անդադար ակտիվ մասնակցության աճումով։ Թե բանվորը և թե գյուղացին հասկանում են արդեն, վոր կոոպերատիվը առևտրական խանութ չէ, վոր կոոպխանութը իրենցն է, և իրենք կոոպերատիվի տերն ու տնորենը. վոր իրենք կարող են ազդել կոոպերատիվի գործունեության վրա և ուղղություն տալ վարչության և վերատեսուչ հանձնաժողովի կազմի, խանութների հանձնաժողովների, լիազորների ու ընդհանուր ժողովների միջոցով. վոր կոոպերատիվը վոչ միայն ապրանք մատակարարելու համար է, այլ վոր նա մի կազմակերպություն է, վորը իր անդամների համար պիտի տանի կուլտ-կրթական աշխատանք։

Ցերբ 1928 թ. առ. 1-ն հոկտեմբերի մեջ ունցինք 863.089 անդամ ու փայատեր, յեվ այդպիսով անցած 5 տարվա ընթացքում անդամագրվել են 750,000 հոգի, ուրեմն գալիս 5 տարում՝ մեջ

հավատացաս եմք՝ կանդամագրվեն 670,000 հոգի նոր անդամներ։ Այնպես վոր՝ 1933 թվի հոկտեմբերի 1-ին՝ համաձայն մեր հնգամյա նախագծի՝ մենք կունենանք 1.533.150 անդամ։ Բայց կոոպերացման հաջողությունը կախված է իրենցի՝ մասսայից ու նրա այն ձեվակերպված գիտակցությունից, թե կոոպերատիվը իսկապես վոչ միայն խանութ է կամ առևտրական հիմնարկություն, այլ յեվ նա մեր կյանքի բարեփոխման ու նոր կյանքի վերաշինման հիմքն է։ Գյուղացիական բոլոր տնտեսությունները, յեվ առաջին հերթին չքավորների ու միջակների տնտեսությունները պետք է կոոպերացման յենթարկվեն։ *Մինչև այժմ Անդրկովկասում կոոպերացիայի յենթարկվել գյուղացիության տնտեսությունների կեսից շատ քիչ ավելին։ Ստորև բերված թվերը ցույց են տալիս, թե սպառ. կոոպերացիան ինչպես է գրավել դեպի իր շարքերը գյուղացիության տնտեսությունները։*

Աղյուսակ № 2.



Խոշոր բանկոոպներում ու Տպո-ում կոոպերացումը կատարվում է, ի հարկե, ավելի հաջող։ Այնտեղ կոոպերացման են յեն-

*) Առ 1-ն հունվարի։

թարկվել արհմիությունների անդամների $^3/_4$-ը։ Թե ինչպես է կատարվել այդ կոոպերացումը, յերևում է հետևյալ թվերից.

Աղյուսակ № 3.



Սպառողական կոոպերացիայի առաջ դրված է մի հարց, այն է՝ կոոպերացիայի շարքերը գրավել վոչ միայն գյուղացիական տնտեսությունների յեվ արհմիությունների անդամների 100%-ը, այլ յեվ բոլոր ընտանիքների յեկրորդ անդամներին, վորպեսզի վոչ թե միայն ընտանիքի «գլուխը» կամ ընտանիքի մի անդամը, այլ ամբողջ ընտանիքը անդամագրված լինի կոոպերացիայում ու գործունյա անդամների շարքերում լինի։

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԸ

1924 թվի հունվարի 1-ից կոոպերատիվների թիվը կրկին սկսում է աճել, բայց դա կոոպերացիայի նախկին աճումը չէ, այլ նախագծով ծրագրված զարգացում։ Այդ զարգացման չափը մենք տեսնում ենք հետևյալ վիճակագրական թվերից.

Աղյուսակ № 4.



Այդպիսով 1926 թվի հոկտեմբերի 1-ից կոոպերատիվների աճումը դանդաղում է։ Կոոպերատիվների ծախսերը պակասեցնելու և կոոպերատիվները ներքուստ ուժեղացնելու համար՝ անդրկովկասյան սպառ. կոոպերացիայի առևտրական ցանցն սկսում է զարգանալ վոչ թե նոր ընկերություններ կազմակերպելով, այլ խանութների ցանցի բազմացումով (կոոպերատիվը ունի մի քանի խանութ — բազմախանութ)։ Խանութների աճման չափը մեզ համար պարզ կլինի հետևյալ թվերից.

Աղյուսակ № 5.



Վերջին տարիներս սպառ. կոոպերացիան ավելի յե արագացնում իր առևտրական ցանցի զարգացումը։

1925-6 թվին բացվել է 372 նոր խանութ
1926-7 » » 642 » »
1927-8 » » 639 » »

Խանութների ցանցի այդորինակ արագ աճումն իրագործում է սպառ. կոոպերացիայի հիմնական նպատակներից մեկը, այն է՝ խանութների մոտեցումը սպառողներին։ Այդ նպատակն իրա-

գործելու չափի մասին գաղափար և տալիս հետևյալ վիճակագրական աղյուսակը, վորից յերևում է, թե Անդրկովկասում միջին թվով քանի հոգի յե ընկնում մի խանութին։

Աղյուսակ № 6.



ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՊԱՌ. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՍԽԵՄԱՆ

Անդրկովկասյան սպառ. կոոպերացիայի կազմի մասին գաղափար ստանալու համար՝ թե վորպես մի ամբողջություն և թե ըստ հանրապետությունների, մենք կբերենք նրա սխեման առ 1-ն հոկտեմբերի 1928 թ.։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
120
95
95
95

Անդրկովկասյան սպառ. կոոպերացիայի ամբողջ սիստեման Զակսոյուզի միջոցով մտնում է Համամիության Ցենտրոսոյուզի կազմի մեջ (ՍԽՀՄ սպառող. կոոպերատիվների կենտրոնական միությունը)։

Անդրկովկասում ամբողջ սպառ. կոոպերացիան կազմում է Զակսոյուզ միությունը։ Վերջինիս անմիջական անդամներն են հանրապետությունների 4 միությունները, որոնք միացնում են ամբողջ սպառողական կոոպերացիան.

1) Ազերիտտիֆակը՝ Ադերբեջանում.

2) Հայկոոպը՝ Հայաստանում.

3) Ցեկավշիրին՝ Վրաստանում.

4) Աբ-սոյուզը՝ Աբխազիայում, որը միաժամանակ Ցեկավշիրիի անդամ է։

Բացի այդ Զակսոյուզի մեջ իբրև անդամ մտնում են 6 խոշոր կոոպերատիվներ՝

1) ԲԱԳ. ՅՐԿ—Բազվի բանվորական կոոպերատիվը, որը միաժամանակ Ազերիտտիֆակի անդամն է։

2) ԿԱՍ. ՏՊՈ—Ադրբեջանի ծովային բանվ. կոոպերատիվը, որը միաժամանակ Ազերիտտիֆակի անդամն է։

3) Ցերևանի Բանկոոպը—Ցերևանի բանվորական կոոպերատիվը, որը միաժամանակ Հայկոոպի անդամն է։

4) Թիֆլիսի Երկոոպը—Թիֆլիսի բանվորական կոոպերատիվը, որը միաժանակ Ցեկավշիրիի անդամ է։

5) ԶԱԿՏՊՈ—Անդրկովկասյան յերկաթուղային բանվոր ծառայողների կոոպերատիվը և

6) ԶԱԿ. ՎՊՈ—Անդրկովկասյան կարմիր-բանակայինների կոոպերատիվը։

Բոլոր սպառողական կոոպերատիվներն անդամագրված են իրենց հանրապետության կոոպերատիվ միությանը։ Բացառություն են կազմում միայն 2 կազմակերպություն, այն է՝ ԶԱԿՏՊՈ և ԶԱԿՎՊՈ, որոնք աշխատում են ամբողջ Անդրկովկասում և այդ պատճառով էլ մտնում են Զակսոյուզի մեջ։

Վերը բերված սխեման տալիս է սպառողական ընկերությունների թիվը, նրանց խանութների ցանցը և անդամների քանակն՝ ըստ հանրապետությունների և կազմակերպությունների։ Բայց վորպեսզի պատկերն ավելի ակներև լինի ու համեմատական, մենք նույն տեղեկությունները կտանք այլ կերպ դասավորված.

	Սպառ. ընկերութ. թիվը	Խանութ. թիվը	Անդամների թիվը
Խոշոր ՅՐԿ, ՏՊՈ և ՎՊՈ			
Բազվի ՅՐԿ	1	420	108.062
Թիֆլիսի Երկոոպը	1	458	43.662
Զակ.ՏՊՈ	1	216	41.461
Զակ.ՎՊՈ	1	95	29.519
Ցերևանի Բանկոոպը	1	34	12.452
Կաս.ՏՊՈ	1	54	9.375
Սպառ. ընկերութ. մնացած ցանցը			
Վրաստան	149	993	282.856
Ադրբեջան.	252	899	215.263
Հայաստան.	95	407	100.321
Աբխազիա	21	93	20.117

ԱՆԴՐԿԿՈՎԱՍՅԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սպառողական կոոպերացիայի առևտրական ցանցը՝ չնայած նրա արագ աճմանը՝ զարգացման նոր պահանջների առաջ է կանգնած։ Մասնավորի հետ սկսած պայքարը՝ շուկային տիրանա-

լու նպատակով՝ կոոպերացիայից պահանջում է բանալ նոր և նոր խանութներ։ Մասնավորների փակվող խանութներն անհամապատասխան են կոոպերատիվների համար։ Մասնավորի խանութը մեծ շենք չեր ներկայացնում, վորովհետև նա ուներ ապրանքների սահմանափակ պաշար ու տեսակներ (չեշուդ)։ Կոոպերատիվ առևտուրը նպատակ ունի բավարարել անդամների բոլոր կարիքները։ Կոոպերատիվը պարտավոր է իր ապրանքները պահել մաքուր և կանոնավոր։ Իսկ դրա համար հարկավոր է ունենալ հարմար շենք։ Ցեվ սպառ. կոոպերացիան պահանջ ունի նոր ձևի ու հարմար կահավորված առևտրական շենքերի։

Սպառողական կոոպերացիան մինչև հիմա՝ սակավ բացառությամբ՝ շատ քիչ ուշադրություն է դարձրել իր առևտրական շենքերի հարմարություններին և դրության։ Ապրանքների տեսակների ճոխացման միջոցով շրջանառության ծավալումն առաջադրում է կոոպերացիային՝ վերաքննելու այժմյան առևտրական շենքերի հարցը, այն է՝ նրանց վերաշինության, ընդլայնելու և նրանցում ապրանքները ապահով պահելու տեսակետից։ Կոոպերատիվի ամեն մի անդամը՝ լինի նա բանվոր, գյուղացի թե ծառայող՝ պարտավոր է իմանալ, վոր կոոպերատիվի լայն աշխատանքի հիմնական ու գլխավոր պայմանը հարմար խանութն է։ Լավ ու հարմար խանութներ ունենալու դեպքում՝ կոոպերատիվի ապրանքները անհետաքրքիր չափով կփչանան, վատնումներ կատարելու հնարավորությունը կվերանա, խանութի ծառայողների համար էլ լավ ու հարմար կլինի, անհուշ վատ չի լինի դրված նայել անդամների մատակարարման գործը։

2. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌԻ (РОЗНИЦА) ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Տարեց տարի վաճառած ապրանքների շրջանառությունը նկատելի չափով մեծանում է։ Անդրկովկասյան սպառ. կոոպերացիայի փոքրաքանակ վաճառքի մասին գաղափար կազմելու համար՝ մենք տալիս ենք հետևյալ թվերը։

59855-66

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

Աղյուսակ № 7.



Միաժամանակ տեղի յե ունենում Անդրկովկասյան սպառ. ընկերությունների շրջանառության աճումը, վորը պարզվում է հետևյալ թվերից։

1925-26 թ.	շրջանառ.	1924-25 թ.	հանդեպ՝	ավելացել է	36 միլ.	ռ.
1926-27 »	»	1925-26 »	»	»	52 »	»
1927-28 »	»	1926-27 »	»	»	81 »	»

Շրջանառության այսորինակ արագ ծավալումը բացատրվում է սպառ. կոոպերացիային առաջադրված նպատակով, այն է՝ յերկրի ապրանքային ամբողջ շրջանառությունն իր ձեռքն առնելով և շուկան մասնավորից ազատելով։

Նայեցեք հետևյալ աղյուսակին։

Մեծագույն գրադարան Гос. Библиотека

Աղյուսակ № 8.



Մինչև 1927-28 տնտեսական տարին մասնավոր առևտուրը կազմում էր յերկրի ամբողջ առևտրի կեսը։ 1925-26 թվին մենք նույնիսկ տեսնում ենք, վոր մասնավոր առևտուրն ավելանում է պետականի հաշվին։ Բայց 1927-28 թվին կոոպերացիան գրավում է առաջին տեղը, իսկ մասնավորը՝ յերկրորդ։ Հինգ տարուց հետո, այն է՝ 1932-33 թվին, մեր 5-ամյա ծրագրի հիման վրա, կոոպերացիան պիտի գրավի շուկայի փոքրաքանակ վաճառքի (розница) 75,5%, թողնելով մասնավորին՝ ընդամենը 21%։ Պետական փոքրաքանակ վաճառքը առհասարակ միշտ էլ աննշան տեղ է բռնել և ոգնել է կոոպերացիային՝ պայքարելու մասնավորի դեմ։

Բայց 5 տարուց հետո, յերբ կոոպերատիվային փոքրաքանակ վաճառքը կուժեղանա, պետական առևտուրն իր տեղը կզիջի կոոպերացիային և իրեն կվերապահի այն ապրանքների վաճառքը, վորոնց կոոպերացիան դեռ ձեռնամուխ չի յեղել։

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՔԻ (ОПТОВАЯ ТОРГОВЛЯ) ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև այժմ մենք ծանոթացանք սպառ. ընկերությունների առևտրի հետ։ Այժմ ծանոթանանք միությունների տնտեսական աշխատանքների հետ և տեսնենք, թե ինչպես են լուծում նրանք իրենց առաջադրած տնտեսական խնդիրները։

Սպառողական ընկերությունները զբաղվում են ապրանքների բաշխումով. բայց ապրանքները պիտի վորևե տեղից ստանալ։ Յեթե բոլոր 500 կոոպերատիվները գնային ապրանք առնելու, կստացվեր մի քաոս՝ կապված անչափ ու խոշոր ծախսերի հետ։ Ապրանքներ գնելու հոգսից կոոպերատիվները ազատ են շնորհիվ միությունների, վորոնք մատակարարման գործը տանում են կազմակերպված և նախորոք մշակած ծրագրով։ Հանրապետությունների միությունները մատակարարում են իրենց անմիջական անդամ-կոոպերատիվներին, իսկ Զակսոյուզը մատակարարում է թե՛ հանրապետությունների միություններին և թե՛ խոշոր բանվորական կոոպերատիվներին, վորոնք Զակսոյուզի անմիջական անդամներն են։

Այդպիսով Զակոյուզն ապրանքները փոխադրում է ցենտրոսոյուզից հանրապետությունների միությունները, իսկ վերջիններս կատարում են ապրանքների բաշխումը իրենց ցանցում գտնվող կոոպերատիվներին։ Այժմ տեսնենք, թե միությունները ինչպես լուծեցին այդ հարցը։ Ստորև բերում ենք միությունների և Զակոյուզի շրջանառությանը վերաբերող մի շարք թվեր։

Աղյուսակ № 9.



Աղյուսակ № 10.



Այդ շրջանառության զարգացման հետ միաժամանակ մեծանում է կոոպերացիայի դերը անդրկովկասյան ընդհանուր շրջանառության մեջ։ Դա ակներև է հետևյալ աղյուսակից.

Աղյուսակ № 11.



1924-25 թ. կոոպերացիայի դերը անդրկովկասյան առևտրի մեջ շատ չնչին եր։ Բայց տարեց տարի նրա դերը մեծանում է։ Մինչև 1927-28 թ. մեծաքանակ առևտրի մեջ առաջին տեղը պետառևտրինն եր, իսկ մասնավորինը՝ վերջինը։ Բայց տարեց տարի պետառևտուրն իր տեղը զիջում է կոոպերացիային, վորը 1927-28 թվին բռնում է առաջին տեղը։

Հինգ տարուց հետո, այն է՝ 1932-33 թվին կոոպերացիան ծրագրում է գրավել առևտրի 70%-ը, թողնելով պետառևտրին 30%-ը։ Իսկ մասնավոր առևտուրը 1932-33 թվին բոլորովին չի լինի։

Պետառևտուրը մեծ զգուշությամբ եր զիջում իր տեղը կոոպերացիային, վախենալով, թե միգուցե նա անկարող լինի տանել առևտրի պատասխանատու գործը։ Բայց կոոպերացիան հաղթանակով տարավ իր վրա վերցրած ծանր լուծը. և այժմ նրա առևտրի շրջանառության զարգացումը կախված է միայն կոոպերացիայի ֆինանսական հնարավորություններից։

Առևտրի շրջանառության զարգացման հետ միաժամանակ միությունները հնարավորություն են ստանում բավարար կերպով լուծել կոոպերատիվներին ապրանքներ մատակարարելու գործը։ Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս հանրապետությունների միությունների տարած աշխատանքը գավառական ցանցին ապրանքներ մատակարարելու գործում։

Աղյուսակ № 12.



Հանրապետությունների միությունների թուլության պատճառով 1924-25 թվին սպառ. կոոպերատիվներն իրենց անհրաժեշտ ապրանքների 64,1% ստանում եյին վոչ միության միջոցով։ Բայց 1927-28 թվին այն հասնում է մինչև 17%-ի։

Աղյուսակ № 13.



1924-25 թվին Զակսոյուզի միջոցով ստացած ապրանքների չափը կազմում է 2,1%, իսկ 1927-28 թվին՝ 63,8%։

Խոշոր դեր է կատարում Զակսոյուզը նաև ՏՊՈ, ՎՊՈ և բանկոոպներին ապրանք մատակարարելու գործում, վորը ակներև է հետևյալից.

Աղյուսակ № 14.



Այդ շրջանում Զակսոյուզի մասնակցությունը կազմում է 30,4%, վորովհետև մինչև հիմա չել խոշոր բանկոոպները, ՏՊՈ և ՎՊՈ կոոպերատիվներն իրենց ապրանքների մեծ մասն անմիջապես ստանում են իրենց կենտրոններից, այն է՝ Ցերաբսեկցիայից և Տրանսոսեկցիայից։ Այդ յերկու սեկցիաներն էլ գտնվում են Ցենտրոսոյուզին կից և միացնում են առաջինը՝ բանվորական

կոոպերացիան, իսկ յերկրորդը՝ փոխադրական։ Ապագայում, անշուշտ, այս ճակատումն ել Զակոյուզն առաջին տեղը կգրավի։

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ (ՁԵՇՈՒԴԸ)

Սպառ. կոոպերացիայի այսորինակ զարգացումը բացատրվում է ապրանքների այն բազմատեսակությամբ, որը նա ուներ իր տրամադրության տակ։ Սկզբում ճոթեղենը սպառ. կոոպերացիայի ապրանքների մեջ բռնում եր հիմնական տեղը, կազմելով ընդհանուր շրջանառության կեսից ավելին։

Այժմ նրա դերն ընկնում է և նա իր տեղը զիջում է ուրիշ ապրանքների։

Հետևյալ վիճակագրական թվերը պարզ ցույց են տալիս ամեն մի ապրանքի դերը անդրկովկասյան սպառողական կոոպերատ. փոքրաքանակ վաճառքի շրջանառութ. մեջ վերջին յերկու տարում։

Ա ղ յ ո ւ ս ա կ № 15.



Աղյուսակը ցույց է տալիս, որ ճոթեղենի դերը 1926-27 թվից ընկնում է, իսկ մյուս ապրանքներինը՝ բարձրանում։

Յեթե փոքրաքանակ վաճառքի շրջանառության զարգացումը 197 միլ. ռուբլուց (1926-27 թ.) հասել է մինչև 278 միլ. ռուբլի (1927-28 թ.), ճոթեղենի շրջանառությունը մնացել է անփոփոխ, այն է՝ 67 միլ. ռուբլի։

Ա ղ յ ո ւ ս ա կ № 16.



Մյուս ապրանքների շրջանառությունը ցույց է տալիս վորոշ զարգացում։

Աճում է հատիկային արտադրանքների շրջանառությունը 12 միլ. ռուբլուց բարձրացել է 25 միլ. ռուբլու։

Ա ղ յ ո ւ ս ա կ № 17.



Ավելի մեծ աճում են ցույց տալիս գյուղատնտեսական մյուս մթերքները, այն է՝ միսը, կաթնեղենը, բանջարեղենները։ Դրանց շրջանառությունը 14 միլ. ռուբլուց բարձրացել է 25 միլ. ռուբլու։

Աղյուսակ № 18.



Զգալի կերպով մեծացել է նպարեղենների շրջանառությունը, վորը 52 միլ. ռուբլուց բարձրացել է մինչև 91 միլ. ռուբլու, և այստեղ ել նկատվում է այս խմբի ապրանքների տեսակների բազմացումը. և այդ խմբի մեջ շաքարը շատ չնչին ավելացում է տալիս։

Աղյուսակ № 19.



Մեծ ավելացում է ցույց տալիս նաև պատրաստի շորեղենի և արդուզարդի շրջանառությունը, այն է՝ 11 միլ. ռուբլուց հասել է մինչև 23 միլ. ռուբլու։

Աղյուսակ № 20.



Աճում է նաև կոշկեղենի շրջանառությունը, այն է՝ 8 միլիոնից հասել է 15 միլ. ռուբլու։

Աղյուսակ № 21.



Աճում է տնտեսավարական խմբի ապրանքների շրջանառությունը, վորը 13 միլ. ռուբլուց հասել է 24 միլ. ռուբլու։ Այդ խմբի մեջ մենք նկատի ունենք՝ մետաղեղենը, ամանեղենը, ապակեղենը և այն։

Աղյուսակ № 22.



Կոոպերատիվային առևտրի ապրանքների տեսակները բազմանում են։ Շատ ապրանքներ համարյա ամբողջովին անցել են կոոպերացիային, այդ պատճառով էլ նրանց շրջանառությունն այլ ևս նկատելի աճեցում չի տալիս։ Բայց կոոպերացիան պիտի ամբողջովին գրավի շուկան՝ ուստի կոոպերացիան՝ սովորելով առևտուր անել մի տեսակ ապրանքի վերաբերմամբ՝ աշխատում է ձեռք բերել մյուս ապրանքները, այդ կերպով լայնացնելով իր շրջանառությունը։ Ներկայիս անդրկովկասյան սպառողական կոոպերացիայի առաջ դրվում է մի լուրջ հարց, այն է՝ ստանձնել գրավաճառությունը։

ԱՌԱՆՁԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ապրանքային շրջանառությանը վերաբերող հարցը յեզրափակելու համար՝ մենք կտանք սպառողական տարբեր կազմակերպությունների շրջանառության համեմատական թվերը 1927-28 տնտեսական տարում։

	Ռուբլի
Խոշոր Բանկոոպները, ՏՊՈ յեվ ՎՊՈ	
Բազվի ՅՐԿ	67.239.000
Թիֆլիսի Երկոոպը	31.271.000
Զակ. ՏՊՈ	18.076.000
Զակ. ՎՊՈ	15.842.000
Կաս. ՏՊՈ	12.710.000
Յերևանի Բանկոոպը	12.323.000
Մնացած սպառողական ընկերությունները.	
Վրաստան	46.449.000
Ադրբեջան	43.351.000
Հայաստան	19.160.000
Աբխազիա	6.779.000
Հանրապետությունների Միությունները.	
Ադերբեյջան	39.041.000
Յեկավշիրի	28.743.000
Հայկոոպ	16.607.000
Աբ-սոյուզ	5.035.000
Զակսոյուզ	98.136.000

Ինչպես տեսնում ենք, կոոպերացիայի վարին ցանցում ամենախոշոր կազմակերպությունն է Բազվա ՅՐԿ (Բանկոոպ). յերկրորդ տեղը բռնում է Թիֆլիսի Երկոոպը։

Խոշոր առևտրով զբաղվող կոոպերատիվ կազմակերպությունների մեջ առաջին դերը պատկանում է Զակսոյուզին։

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ

Սպառողական կոոպերացիան իր զարգացման ընթացքում միշտ աշխատել է եժան գներով ապրանք ունենալ, վորովհետև միայն այդ կերպ նա կարող կլիներ պայքարել մասնավոր առևտրականի դեմ։ Իսկ ապրանքներն եժանացնելու միակ միջոցը կարող եր լինել միայն կոոպերացիայի առևտրական ծախքերի նվազեցումը։ Տեսնենք, թե ինչպես կարողացավ լուծել այդ հարցը սպառողական կոոպերացիան իր ողակներում (звенья)։ Հետևյալ թվերը ցույց են տալիս անդրկովկասյան սպառողական կոոպերացիայի փոխրաքանակ վաճառքի ծախքերի չափերը կոպեկներով՝ 1 ռուբլու շրջանառության համեմատությամբ՝

1924-25 թ.	13	կոպ.
1925-26 »	11,4	»
1926-27 »	10,5	»
1927-28 »	10	»

Տարեց տարի անդրկովկասյան կոոպերատիվային փոքրաքանակ առևտրի ծախքերը պակասում են։ Ծախքերը նկատելի չափով պակասել են 1925-26 և 1926-27 թ., յերբ հավելումների խիստ չափեր մտցնելուց հետո՝ կոոպերացիան ամեն ջանք գործ պիտի դներ կրճատելու իր ծախքերը, վորպեսզի կարողանար իր ոգուտները շատացնել։ Ծախքերը կրճատվել եյին մինչև վերջին աստիճան։ Ցավ չնայած վարչական ծախքերը 20%-ով պակասեցնելուն վերաբերող իշխանության տված հրահանգին՝ 1927-28 թվին կոոպերացիան իր ծախքերը 1 ռուբլի շրջանառության հանդեպ իջեցրել է միայն 5 կոպեկ 1 ռուբլու շրջանառության համեմատ։ Բայց ըստ յերևույթին ծախքերի չնչին իջեցումը կազմում է անդրկովկասյան սպառողական կոոպերացիայի շրջանառության գումարի համեմատ (278 միլ. ռուբլի) մեկ ու կես միլիոն ռուբլի։

Վերև բերված աղյուսակի մեջ մենք տալիս ենք ծախքերի միջին թվերը ամբողջ ցանցի համար։ Նրանց չափը տարբեր է կոոպերատիվ տարբեր կազմակերպությունների համար։ Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ծախքերի չափը կոպեկներով 1 ռուբլի շրջանառության հանդեպ 1927-28 թ.։

ՅՐԿ, ՏՊՈ և ՎՊՈ	11 կոպ.
Քաղ. սպառ. կոոպ.	9,4 »
Գյուղ. » »	8,4 »
Միջին թվով	10 »

Ավելի արագ է կատարվել հանրապետությունների միությունների ծախքերի իջեցումը։

8,5 կոպ	1924-25 թ.
5,8 »	1925-26 »
3,2 »	1926-27 »
2,5 »	1927-28 »

և ծախքերի իջեցումը ավելի զգալի չափերի յե հասել Զակսոյուզում։

7,91 կոպ.	1924-25 թ.
1,48 »	1925-26 »
0,37 »	1926 27 »
0,46 »	1927-28 »

Այն ժամանակ, յերբ սպառողական կոոպերատիվները 4 տարվա ընթացքում իջեցրել են իրենց ծախքերը 3 կոպեկ՝ մի ռուբլի շրջանառության հանդեպ, հանրապետությունների միությունները պակասեցրել են իրենց ծախքերը 6 կոպեկ. (8,5 կոպեկից 1924-25 թ. մինչև 2,5 կոպեկ 1927-28 թ.). իսկ Զակսոյուզն իջեցրել է 7,44 կոպեկ (7,9 կոպեկից 1924-25 թ. մինչև 0,46 կոպեկ 1927-28 թ.)։

Այդ յերևույթը բացատրվում է նրանով, վոր միությունները փոխեցին իրենց անդամ կոոպերատիվներին ապրանք մատակարարելու ձևը։

Առաջ միություններում գերակշռում եյին պահեստային գործառնություններ (операции), իսկ այժմ միություններն սկսել են զեկավարվել նաև փոխադրական (транзит) գործառնություններով։ Այդ յերկու տեսակ առևտրական գործառնությունների մեջ յեղած տարբերությունը բնորոշելու համար՝ կբերենք հետևյալ որինակը։

Առաջ Մյուշկյուր (Դուբայի գավառ) գյուղի կոոպերատիվին կոոպերատիվ գծով ապրանք մատակարարելու համար՝ ապրանքը պիտի անցներ № 1 սխեմայում նկարագրած ճանապարհը:

Սխեմա № 1.



Մոսկվայում գործարանը տալիս եր ապրանքը Պետառևտրի պահեստին: Պետառևտուրը տալիս եր Ցենտրոսոյուզիպահեստին: Զակսոյուզը պիտի ստանար Ցենտրոսոյուզի պահեստից այդ ապրանքը և բերեր Թիֆլիս՝ իր պահեստը: Ազերիտտիֆակը պիտի վերցներ այդ ապրանքը Զակսոյուզի պահեստից և տաներ Բաքու իր պահեստը: Հետո նա կուղարկեր ապրանքը Դուբայի իր բաժանմունքին, վորը իր հերթին կդարսեր յուր պահեստում: Հետո արդեն Դուբայի շրջանի ամեն մի սպառողական ընկերություն, նրանց թվում՝ և Մյուշկյուր գյուղի սպառողական ընկերությունը, կգնար Դուբա և այնտեղի Ազերիտտիֆակի բաժանմունքից կստանար ապրանքը ու կտաներ գյուղ:

Այժմ կոոպերատիվ գծով ապրանք մատակարարելու գործն այլ ձևով է կատարվում: Կոոպերատիվը կազմում է իր առևտրի նախագիծը (պլան) և այն ուղարկում է միությանը: Վերջինս իր հերթին կազմում է առևտրական նախագիծ իր ամբողջ ցանցի համար, և ըստ այդ նախագծի տալիս է Զակսոյուզին մի ծանուցում զանազան ապրանքների համար: Զակսոյուզը՝

1— Ցենտրոսոյուզ (Մոսկվա), 2—Զակսոյուզ (Թիֆլիս), 3—Ազերիտտիֆակ (Բաքու), 4—Ազերիտտիֆակի Դուբայի բաժանմունքը (Դուբա), —6 Մյուշկյուր գյուղի սպառողական ընկերութ.

միությունների ծանուցումների հիման վրա՝ Ցենտրոսոյուզի միջոցով պայմանագրեր է դնում պետարդյունաբերության հիմնարկությունների հետ՝ նախագծած ապրանքներն ստանալու համար: Դրանից հետո Զակսոյուզի Մոսկվայի ներկայացուցչությունը Ազերիտտիֆակի ցուցմունքով բարձում է պատվիրած ապրանքներն անմիջապես պետգործարանի պահեստից և ուղարկում Ազերիտտիֆակի նշանակած տեղը (մեր բերած որինակով՝ Դուբայի գավառի Մյուշկյուր գյուղի սպառ. ընկերությանը —սխեմա № 2):

Սխեմա № 2.



Իհարկե, յերբ կոոպերատիվային ցանցը շատ խիտ է մանր կոոպերատիվներով, փոխադրական (տրանզիտ) գործառնությամբ մատակարարելու գործը դժվարություններին յե հանդիպում իր անաղարտ ձևով: Բայց ժամանակի ընթացքում այդ յեղանակը կզարգանա և կամրապընդվի: Զակսոյուզը փակել է իր բոլոր պահեստները և բոլորովին անցել է փոխադրական (տրանզիտ) ձևին:

1927-28 տնտեսական-տարում հանրապետությունների միությունների շրջանառության 40%-ից ավելին կազմում է փոխադրությունը: Այստեղ մենք աչքի առաջ ունենք անաղարտ փոխադրական գործառնությունները (чистые транзитные операции), այն է՝ ապրանքը ուղարկվում է անմիջապես սպառող կոոպերատիվին, իսկ իրենց բաժանմունքներին և կետերին ապրանքների մատակարարումը կատարվում է, սակավ բացառությամբ, փոխադրական ձևով:

1. Զակսոյուզի Մոսկվայի ներկայացուցչութ.
2. Մյուշկյուրի սպառողական ընկերությունը:

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

Առևտրական ապպարատի ծախսերի նվազեցումը հնարավոր դարձրեց հավելումների նվազումը։ Սկսենք անդրկովկ. սպառող. կոոպերացիայի փոքրաքանակ վաճառքից։ Հետևյալ աղյուսակը պարզ ցույց է տալիս ապրանքների գների մեջ մուծված հավելումների փոփոխումները կոպեկներով՝ 1 ռուբլու վաճառած ապրանքի հանդեպ զանազան տարիներում։

Աղյուսակ № 23.



Նույնը հանրապետությունների միությունները։

Աղյուսակ № 24.



Աղյուսակ № 25.



ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ ԶԱԿՈՅՈՒԶՈՒՄ

1927-28 տնտեսական տարում ամբողջ անդրկովկասյան սպառողական կոոպերացիայի ցանցում նկատվում է հավելումների մասնավոր բարձրացում։ Այդ բարձրացումը բացատրվում է նրանով, որ խոշոր բանկոոպները՝ ՏՊՈ և ՎՊՈ կոոպերատիվները բարձրացրել են հավելումները. այնինչ՝ մյուս սպառ. ընկերությունները ցույց են տալիս հավելումների նվազումը։ Բացի այդ, խոշոր բանկոոպների՝ ՏՊՈ ու ՎՊՈ և միությունների հավելումների բարձրացումը բացատրվում է նաև նրանով, որ այդ կազմակերպություններն իրենց ապրանքների տեսակների մեջ մտցրել են բարձր հավելում ունեցող ապրանքներ, առանց վերանայելու բարձրացման ձգտում ունեցող առանձին ապրանքների հավելումները։

Ինչ վերաբերում է Զակոյուզի հավելումների բարձրանալուն, այդ բացատրվում է նախ տեղի ունեցած արտաքին առևտրի (եկսպորտ և իմպորտ) պատահական գործառնություններով և յերկրորդ՝ Զակոյուզի Նախիջևանի բաժանմունքի առևտրական գործառնություններով. բաժանմունքի, որը՝ Նախիջևանի շրջանում է տանում հանրապետության միության աշխատանք, այն է՝ առևտրական պահեստային գործառնություններ—շրջանի

կոոպերատիվ ցանցին ապրանք մատակարարելու։ Իսկ Զակոյուզի կատարած մատակարարողական գործառնությունների մեջ, վորոնք կազմում են նրա ամբողջ շրջանառության $^{9}/_{10}$ մասը, հավելումը 1927-28 թ. նույնիսկ իջել է 0,45%-ից մինչև 0,43%։

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ

Իջեցնելով իր հավելումները, անդրկովկասյան սպառ. կոոպերացիան զգալի չափով եժանացրեց իր ծառայության վարձատրությունը։ Վորպեսզի գաղափար կազմենք այդ ծախսերի նվազեցման չափի մասին, կբերենք յերկու աղյուսակ՝ ցույց տալու, թե ինչպես են աճել գները սպառ. կոոպերացիայի ամբողջ ցանցի մեջ 1924-25 թվին, սկսած Ցենտրոսոյուզի առքի գնից։

Աղյուսակ № 26.



Ցենտրոսոյուզում 1 ռ.	Զակոյուզ. 1 ռ. 06,3 կ.	Հանրապետ. միություն 1 ռ. 13,2 կ.	Գյուղկոոպ. 1 ռ. 24,8 կ.	Սպառողին 1 ռ. 54,6 կ.

Այդպիսով Ցենտրոսոյուզը մի ռուբլով առած ապրանքը ծախում է Զակոյուզին 6,3 կոպեկ հավելումով։ Զակոյուզը տալիս է ապրանքը հանրապետության միությանը 6,9 կոպեկ հավելումով, միությունը տալիս է ապրանքը գյուղի կոոպերատիվին՝ 11,6 կոպեկ հավելումով և, վերջապես, սպառ. կոոպերատիվը ծախում է ապրանքը գյուղացուն 29,8 կոպեկ հավելումով։ Ուրեմն կոոպերացիայի միջոցով գյուղացին ապրանք է ստանում 54,6 կոպեկ հավելումով։

Այժմ տեսնենք գների աճումը 1927-28 տնտեսական տարում։

Աղյուսակ № 27.

Ցենտրոսոյուզում 1 ռ.	Զակոյուզ. 1 ռ. 01,5 կ.	Հանրապետ. միություն 1 ռ. 02, 6 կ.	Գյուղկոոպ. 1 ռ. 14,3 կ.	Սպառողին 1 ռ. 35,4 կ.

Կոոպերացիայի միջնորդության արժեքը պակասել է 19,2 կոպեկով։ Բայց փաստորեն այդ նվազեցումն ավելի կլինի, քան մեր թվերն են ասում, վորովհետև հաշվառքի ժամանակ մենք վերցրել ենք Ցենտրոսոյուզի և Զակոյուզի ընդհանուր հավելումները, այսինքն՝ մատակարարման գործառնությունների հավելումներն զգալի չափով պակաս են։

3. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑԻՆԵՐԸ

Տարեց տարի սպառակ. կոոպերացիայի ֆինանսական դրությունը լավանում է։ Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս անդրկովկ. սպառ. կոոպերացիայի սեփական միջոցների աճումը։

Աղյուսակ № 28.



Այդ միջոցների մի մասը մուծվել է կոոպերացիայի ակտիվը, վորպես դույք, արժեթուղթ և այլն։ Այդ արժեքների աճումը յերևում է հետևյալ աղյուսակից։

Աղյուսակ № 29.



Սեփական միջոցների մնացած մասը, վորը գտնվում է կոոպերացիայի շրջանառության մեջ, յենթարկվել է հետևյալ փոփոխումներին.

Աղյուսակ № 30.



ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՑԵՎ ՊԱՐՏՔԵՐԸ

1924 թվին, յերբ սպառ. կոոպերացիան զարգացման ճիշտ և ուղիղ գծի վրա դրվեց, նրան պաշտպանելու համար՝ բաց արին ապրանքային խոշոր վարկ։

Բայց 1924-25 թվին պետության առաջ ծառացավ մի նոր խնդիր, այն է՝ ուշադրություն դարձնել արդյունագործության զարգացմանը։ Այդ պատճառով էլ այդ տարվանից պետական միջոցները, վոր ստանում էր կոոպերացիան զանազան ձևի վարկերով, գլխավորապես տրվում են պետարդյունագործությանը։ Վարկերի կըրճատումը ուժեղ ազդեցություն ունեցավ կոոպերացիայի ֆինանսական դրության վրա, այն է՝ բոլոր խոշոր բանվորական կոոպերատիվները և հանրապետությունների միությունները, վորոնք ավելի հաճախ եյին ոգտվում վարկից, սկսեցին խոշոր վնասներ ստանալ։ Կրճատվում են նրանց սեփական միջոցները, վորոնք գտնվում եյին շրջանառության մեջ։ Բայց 1925-26 թ. տնտեսական տարում պետությունը տվեց կոոպերացիային յերկար-ժամանակյա փոխառություն և առաջարկեց, վոր կոոպերացիան կազմակերպե իր սեփական ֆոնդը։

1925-26 թվին սպառ. կոոպերացիան սկսեց իրագործել իրեն առաջադրած խնդիրները։ Շրջանառությունից դուրս գտնվող բոլոր միջոցներին ի հայտ եյին բերվում, լիկվիդացիայի եյին յենթարկվում (կանխիկացնում եյին) ավելորդ դույքերը և ֆնասաբեր ու քիչ շահավետ հիմնարկությունները։ Այդ պատճառով էլ շրջանառությունից դուրս գտնվող միջոցներն այդ ժամանակամիջոցում չեն ավելանում, այլ նույնիսկ կրճատվում։ Բայց կոոպերատորների ուշադրությունն ուղղված եր ոգուտներ և ֆոնդեր կուտակելու կողմը։ Ծախքերը կրճատվում եյին և բարձր հավելումները պահվում։ Գյուղերում նույնիսկ նկատվում եր հավելումները և գները բարձրացնելու ցանկություն։ Արդյունագործական և գյուղատնտեսական ապրանքների գների տարբերությունը («ножницы»—«մկրատը») 1925-26 տնտես. տարվա վերջին առաջ և բերում գներն իջեցնելու պայքար, և վերջինս ստիպում է իջեցնել հավելումները պետական որգանների (առևտրական ժողկոմատները) կողմից հաստատված հավելումների չափերով (нормы)։ 1926-27 տնտ. ամբողջ տարին անցավ մի լո-

զունգի տակ՝ «պայքար գները նվազեցնելու համար»։ Նվազեցրած եյին հավելումները, բայց ավելի ևս կրճատվում եյին ծախքերը, վորպեսզի կուտակումն իրագործվի։ Այնուամենայնիվ մեծ հույսեր տածել չեր կարելի։ Ցեվ ահա այժմ միայն կոոպերացիան սկսում է ուշադրություն դարձնել փայերի ավելացման վրա (паенакопление)։ 1927-28 թվին, յերբ վարկերի կրճատումն ավելի սուր կերպարանք ստացավ և սեփական միջոցների կուտակումի խնդիրն ավելի ուժգին բաղխեց կոոպերացիայի դուռը, սպառ. կոոպերաց. մի արտասովոր պայքար է հայտարարում՝ սեփական

Աղյուսակ № 31.



միջոցներն ավելացնելու համար, և այդ տալիս է դգալի դրական հետևանք. կոոպերացիայի ֆինանսական դրությունն ամրապնդվում է և դարձնում նրան իսկապես մի հասարակական-մասսայական կազմակերպություն։

Այդպիսով՝ վարկերի կրճատումը մի կողմից և սեփական միջոցների կուտակումը՝ մյուս կողմից այն դրությունն են ստեղծում, վոր անդրկովկասյան սպառողական կոոպերացիայի շրջանառության մեջ բարձրանում է սեփական միջոցների դերը։

Ահա մի աղյուսակ, վորը ցույց է տալիս, թե քանի՞ ռուբլի վարկ եր ստանում սպառ. կոոպերացիան 100 ռուբլու շրջանառության հանդեպ։

Պարզ է, վոր վարկը նկատելի չափով կրճատվում է։ Ահա մի ուրիշ աղյուսակ, վորը ցույց է տալիս, թե կոոպերացիան նույն 100 ռ. շրջանառության հանդեպ ինչքան եր տալիս իր սեփական միջոցներից։

Աղյուսակ № 32.



Այստեղ մենք տեսնում ենք սեփական միջոցների աճումը։ Այդ պատճառով էլ փոխվում է սեփական միջոցների և պարտքերի փոխհարաբերությունը շրջանառության դրամագլխի մեջ։ Թե քանի՞ կոպեկ պարտք է ընկնում սեփական միջոցների 1 ռուբլուն, այդ յերևում է հետևյալ աղյուսակից.



Աղյուսակ № 33.

ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Մեր բանվորա-գյուղացիական պետությունը շրջապատված է մեզ թշնամի բուրժուական պետություններով, որոնք վոչ միայն չեն ցանկանում ոգնել մեզ, այլ նույնիսկ աշխատում են խանգարել մեր աշխատանքները։ Այդ պատճառով էլ մեր յերկրում արդյունագործությունը բարձրացնելու հարցը հանդիպում է մեծ դժվարությունների։ Մեզ հարկավոր ու անհրաժեշտ մեքենաները մենք կարող ենք ստանալ արտասահմանից կամ կանխիկ վոսկով, կամ թե հում նյութեր արտահանելով։ Մեր արտադրության ընդլայնումը՝ թե արդյունագործական և թե գյուղատնտեսական ճակատում՝ հանդիսանում է նոր մեքենաներ ստանալու կնճռոտ հարցին։ Այդ իսկ պատճառով պետությունը յերկրի բոլոր միջոցներն ուղղում է գլխավորապես դեպի այդ կողմը։ Իսկ այդ քաղաքականությունը կտանի դեպի վարկի կրճատումներ՝ սպառ. կոոպերացիայի համար։ Ցեվ կոոպերացիան ավելի ու ավելի կզբաղվի սեփական միջոցներ գտնելու հարցով։ Հավելումները առաջիկա տարիներում զգալի կուտակումներ չեն կարող

տալ։ Բարձրացնել հավելումները, դրա հետ նաև գները, անկարելի յե, վորովհետև դա սպառողի շահերին դեմ է։ Իսկ այստեղ կոոպերացիայի առաջ ծառանում է մի ուրիշ պահանջ, այն է՝ շինարարությունը։ Անհրաժեշտ է վերանորոգել կոոպերացիայի հին, խարխուլ խանութները և կառուցել նորերը։ Ցեվ նպաստվող ոգուտների մեծ մասը կգնա՝ այդ պահանջը բավարարելու։ Բացի այդ, կոոպերացիայի առաջ դրված է մի այլ անհետաձգելի խնդիր, այն է՝ կուլտուրա-կրթական աշխատանքը՝ կոոպերացիայի անդամների կուլտուրական մակարդակը բարձրացնելու, վորովհետև լոկ այն ժամանակ կարելի կլինի կոոպերատիվի գործերը լավ և ամուր հիմքերի վրա դնել, յերբ կարելի լինի հենվել նրա անդամների մեծամասնությանը։ Իսկ այդ կարելի կլինի այն ժամանակ, յերբ կոոպերատիվի անդամը հասկանա և գիտակցի, թե ինչ է կոոպերատիվը, ինչ է խորհրդային պետությունը, յերբ նա իր կոոպերատիվում տեղի ունեցած սխալները կամ թերությունները չի վերագրի վողջ կոոպերացիային, յերբ նա կիմանա, թե ինչ կերպ է հարկավոր այդ սխալներն ու թերություններն ուղղել, թե ինչպես են նրանք ծագում. ուստի և անհրաժեշտ է զարգացնել կուլտուրա-կրթական աշխատանքը։

Ներկայիս անդրկովկասյան սպառող. կոոպերացիայի ամբողջ գծով դրվել է այդ աշխատանքը։ Սպառողական կոոպերացիան կազմակերպում է Անդրկովկասի ամեն մի անկյունում՝ կինո, թատրոն, դասախոսություններ, զրույցներ, խմբեր և այլն։ Այդ նպատակի համար էլ տրվում են մեծ գումարներ։ Այդպիսով շինարարական և կուլտուրա-կրթական աշխատանքների համար հատկացված գումարները նվազեցնում են սեփական միջոցների մուծումը առևտրական շրջանառության մեջ։ Միաժամանակ կոոպերացիան ավելի ու ավելի յե կիրառում իր անդամների և ամբողջ ժողովրդի բյուջեն. իսկ դրա հետ շաղկապված ավելի ու ավելի յե աճում կոոպերացիայի շրջանառությունը։ Վերջինս պահանջում է մեծ գումարներ։ Այնինչ՝ պետական վարկերը կրճատվում են, և կոոպերացիային մնում է ուժեղացնել իր

սեփական միջոցները։ Անհրաժեշտ են վարկերի նոր աղբյուրներ։ Թե վերտեղից ու ինչպես կարելի է ստանալ և՛ մեկը, և՛ մյուսը կտեսնենք հետևյալից։

ՓԱՅԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ

Սպառողական կոոպերացիայի անդամների թվին զուգընթաց աճում է նրա փայադրամագլուխը։ Թե ինչպես է կատարվում փայերի կուտակումը տարեց տարի, յերևում է № 34 աղյուսակից։

Առաջին տարիներում փայադրամագլխի դանդաղ աճումը վերջին տարում (1928 թ.) տալիս է զորեղ թռիչք. դա բացատրվում է այն առանձնակի ուշադրությամբ, որը նվիրել եր կոոպերացիան այդ հարցին։ Մինչև այդ՝ փայադրամագլուխը մեծանում եր բնական ձևով և գլխավորապես նոր անդամների հաշվին։ Այդ պատճառով էլ մուծած փայերի միջին չափն էլ աճում եր աստիճանաբար՝ առանց թռիչքների (տես աղյուսակ № 35)։

Աղյուսակ № 34.



Աղյուսակ № 35.



	Ռուբլիներ
Խոշոր բանկ. ՏՊՈ և ՎՊՈ	
Կաս. ՏՊՈ	14—75
Բաղ. ՅՐԿ	10—41
Զակ. ՏՊՈ	9—34
Թիֆլ. Յերկոոպ.	9—17
Յերևանի բանկոոպ.	8—90
Զակ. ՎՊՈ	6—18
Քաղ. ԿՈՈՊ.	
Վրաստան	7—38
Հայաստան	7—00
Աբխազիա	6—47
Ադրբեջան	6—19
Գյուղկոոպ.	
Վրաստան	6—65
Աբխազիա	6—65
Ադրբեջան	5—99
Հայաստան	5—93

Բայց վերջին տարին փայերի առթիվ մղված պայքարն զգալի չափով բարձրացրեց հավաքած փայերի միջին չափը, և այդ ավելացրեց փայադրամագլուխը ավելի, քան յերկու անգամ։ Անցյալ տարվա փայերի համար մղված պայքարը միահամուռ կերպով անցավ Անդրկովկասում ամենուրեք։ Վորպեսզի պատկերը պարզ լինի, մենք նախորդ 45-րդ եջում առաջ ենք բերել մի աղյուսակ, վորը ցույց է տալիս մուծած փայերի միջին չափը խոշոր բանկոռպներում, քաղկոռպներում և գյուղկոռպներում առ 1-ն հոկտեմբերի 1928 թ.։

Խոշոր կոռպերատիվների մեջ առաջին տեղը բռնում է Կաս. ՏՊՈ-ն, վորի միջին փայաչափը հավասար է 14 ռ. 75 կոպ., վերջին տեղն է բռնում Զակ. ՎՊՈ-ն։ Բայց վերջինիս կազմի մեջ մտնում են կարմիր-բանակայիները, վորոնք փայավճարից ազատ են և մուծում են միայն անդամավճար։ Մնացած բոլոր բանկոռպներում միջին փայաչափը հասնում է մինչև 10 ռ.։ Յեվ այդպիսով կոռպերատիվների համար հրահանգված փայաչափը առ 1-ն հոկտեմբերի 1928 թվի՝ «հավաքել 10 ռ. փայ»՝ լրիվ կատարված է (Զակվպոյում հավաքված է 10 ռ. 22 կոպ.)։

Նույնպես լրիվ կատարված է քաղկոռպների վերաբերմամբ արած հրահանգը՝ «հավաքել 7 ռ. առ 1-ն հոկտեմբերի 1928 թ.» (հավաքված է 6 ռ. 99 կոպեկ) և գյուղկոռպների վերաբերմամբ՝ մինչև 6 ռուբլի (հավաքված է միջին թվով 6 ռ. 26 կոպեկ)։

Բայց ավելի ծանր դրություն է ստեղծվում այս տարի։ Առ 1-ն ապրիլի 1929 թ. հրանգված է միջին փայաչափը 13 ռուբլի՝ բանկոռպների, 10 ռուբլի 50 կոպ.՝ քաղկոռպների և 8 ռուբլի՝ գյուղկոռպների համար։ Տարվող պայքարի տրամադրությունից յերևում է, վոր անհրաժեշտ կլինի մեծ ջանք գործ դնել՝ այդ հրահանգված թվերն ստանալու համար. և կարևոր ու անհրաժեշտ է, վոր բանվոր գյուղացիների մասսան ինքը լուրջ ուշադրություն դարձնի այդ հարցին։ Պիտի հիշել միայն, վոր ինչքան շատ միջոցներ ունենա կոռպերատիվը, այնքան էլ նա ավելի հնարավորություն կունենա բավարարելու իր անդամ-փայատերերին։

ՆՈՐ ՓԱՅ

Իր ապագայ ամբողջ գործունեությունը կոռպերացիան պարտավոր է տանել՝ հիմնվելով միայն սեփական միջոցների վրա, կուտակելով փայավճարները։ Ահա փայաչափերի դրությունը առ 1-ն հոկտեմբերի 1928 թվի՝ համեմատած այն փայավճարի հետ, վորը նախագծված է ունենալ առ 1-ն հոկտեմբերի 1932 թվի։

Աղյուսակ № 36.

ԳՅՈՒՂԿՈՌՊ	1/X-1928	6-26
	1/X-1932	20-00
ՔԱՂԿՈՌՊ	1/X-1928	6-90
	1/X-1932	35-00
ԽՈՇՈՐ ԲԱՆԿՈՌՊ, ՏՊՈ ՅԵՎ ՎՊՈ	1/X-28	10-18
	1/X-1932	40-00

Փայերը ժողովելիս՝ հաշվի պիտի առնվի ժողովրդի զանազան խավերի նյութական հնարավորությունը։ Ամեն մեկը պարտավոր է մտցնել փայը իր յեկամտի համեմատ։ Ով խոշոր յեկամուտ ունի՝ նա, իհարկե, մեծ գումարի գնումներ և կատարում կոռպերատիվում. ուրեմն նրա փայաչափը խոշոր պիտի լինի։ Փայաչափը միատեսակ չի լինելու ամենքի համար, այլ զանազան չա-

փի՝ ըստ ժողովրդի այս կամ այն խմբի յեկամտի։ Դեռ վերջնականապես վորոշված փայաչափեր չկան. բայց ծրագրվում է մոտավորապես հետևյալ փայաչափերը.

Գյուղի համար՝

Գյուղատն. տուրքից ազատված գյուղացիների համար—10 ռ.
» տուրքը վճարող (նորմալ կերպով.
հավելումով ու անհավելում) . . . —25 ռ.
» տուրքը վճարող անհատական ձևով. . . —40 ռ.

Քաղաքի համար՝

	Ռոճ.	Փայը նշան.
Բանվ. և ծառ. համար, վորոնց ռոճիկը հասնում է մինչև. .	50 ռ.	—15 ռ.
» » » » » » » .	51—100 »	—20 »
» » » » » » » .	101—150 »	—30 »
» » » » » » » .	151—225 »	—40 »
» » » » » բարձր է. . .	225-ից	—50 »

Այդ փայի մուծումը պիտի կատարվի վոչ միանվագ, այլ աստիճանաբար, ուստի ժողովրդի համար վճարումը ծանր և զգալի չի լինի։ Փայավճարը հետ կվերադարձվի իսկույն և յեթե, յեթե կոոպերատիվի անդամը հրաժարվում է կոոպերատիվի անդամությունից։ Փայաչափը շարունակ կփոփոխվի, վորը կկատարվի ռոճիկի չափի փոփոխության հետ զուգընթաց։ Յեվ ռոճիկը ավելանալու դեպքում՝ կոոպերատիվի անդամը պարտավոր կլինի փայավճարը լրացնել, իսկ ռոճիկի նվազելու դեպքում՝ նա հետ կստանա տարբերությունը։

Այդպես է նախագծում սպառ. կոոպերացիան ավելացնել և կուտակել իր սեփական միջոցները։ Բայց վորպեսզի նա կարողանա այդ իրագործել, անհրաժեշտ է, վոր գյուղի չքավոր և միջակ դասակարգը՝ մի կողմից և բանվոր-ծառայող դասը քաղաքում՝ մյուս կողմից միահամուռ ու կազմակերպված տանեն նոր փայի կիրառումը։

ԱՎԱՆԴՆԵՐ ՅԵՎ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

Պետական վարկերի կրճատումներն ստիպում են սպառողական կոոպերացիային վարկի նոր աղբյուրներ փնտռել։

Այդպիսի աղբյուրներ են անդամներից ստացած ավանդները և կանխավճարները, վորոնք զգալի չափով ոգտավետ կլինեն կոոպերատիվին և, ուրեմն, անդամ-սպառողներին։

Այդ գործը կազմակերպելու համար հարկավոր է, վոր գյուղացիներն ու բանվորները իրենց խնայողությունները տանը չպահեն, այլ փոխ տան իրենց կոոպերատիվին։ Այդ կերպ մի կողմից մեծ ոգնություն կլինի կոոպերատիվին, մյուս կողմից ել՝ իրենք կոգտվեն, այսինքն՝ կոոպերատիվը փոխարինաբար ստացած գումարի դեմ կը վճարի տոկոսներ ավանդատերերին։ Իսկ յերբ անդամները փողի կարիք կունենան, կոոպերատիվը կվերադարձնի նրանցից ստացած գումարը։ Ավանդները կարելի յե մտցնել կոոպերատիվը ժամկետով յեվ դա ոգտավետ ու հարմար է թե՛ ավանդատերերի յեվ թե կոոպերատիվի համար, վորովհետև կոոպերատիվը կոգտագործի ստացած գումարներն ըստ նշանակած ժամկետների։

Անդրկովկասյան սպառող. կոոպերացիայի ցանցի մեջ դեռ զարգացած չէ կանխավճարների (авансы) մուծումը։ Դրանց հությունը հետևյալն է։ Յեթե կոոպերատիվի անդամը ցանկանում է գնել մի վորևե թանգարժեք իր, որինակ՝ հեշտայեռ, մահճակալ և այլն, նա մաս-մաս մուծում է կոոպերատիվը անհրաժեշտ գումարը և յեթե կոոպերատիվում հավաքվում է առարկայի արժեքի ամբողջ գումարը, կոոպերատիվը տալիս է նրա ուզած իրը։

Կանխավճարների ոգուտը մի կողմից հրանումն է, վոր կոոպերատիվն աջակցում է իր անդամներին խնայողություն կատարելու յեվ հնարավորություն է տալիս հրանց գնելու այն իրը, վորի համար հրանք իսկզբանե կերպով անկարող կլինեն խնայողություն անել։ Մյուս կողմից ել կանխավճարներն ոգտավետ են կոոպերատիվի համար, վորովհետև այդպիսով նա ստանում է ժամանակավոր վարկ։

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒՅԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԽԵՂՃԵՐԻ ՈՒ ՉՔԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՑՈՒՄԸ

Վորպեսզի կարելի լինի ուժեղացնել չքավորների ազդեցությունը կոոպերացիայում, սպառ. կոոպերացիան հանձն է առել այդպիսիներին կոոպերատիվի անդամների շարքերն ընդունել։ Այդ ուղղությամբ անդրկովկասյան սպառ. կոոպերացիան իր աշ-

խատանքներն սկսել է 1926-27 թվին։ Բայց միայն 1927-28 թ. այդ աշխատանքն ստացավ պատշաճ ծավալ։ Այս տարի անդրկովկասյան սպառ. կոոպերացիայի համարյա ամբողջ ցանցը՝ չքավորներին կոոպերացման յենթարկելու համար՝ կազմակերպել է հատուկ ֆոնդեր (մոտավորապես 180.000 ռուբլի կամ ցանցի զուտ ոգուտի 11,42%)։ Այդ ֆոնդերն անցյալ տարի ամբողջովին ոգտագործվել են, և մեծ մասամբ ոգտագործումները կատարվել են կանոնավոր։ Բայց յեղել են առանձին դեպքեր, յերբ այդ ֆոնդերից արվել են զանազան անուղղակի ծախսեր, վոր բացատրվում է 1927-28 թ. կոոպմիությունի կազմակերպված ղեկավարության բացակայությամբ։ 1928-29 թվին կոոպմիությունները ձեռք են առել միջոցներ՝ այդ գործը կազմակերպելու և նրան վորոշ ուղղություն տալու։ Կազմակերպված է չքավորների կոոպերացման և նրանց կարիքները բավարարելու հետազոտությունը։

Կոոպերատիվներն ստանում են պատշաճ հրահանգներ՝ այդ ֆոնդերը կանոնավոր ու նպատակահարմար ոգտագործելու։ Այս տարի այդ ֆոնդերը լրացնելու համար՝ կհատկացվի կոոպերատիվների զուտ ոգուտի 15%-ը, վորը կտա մոտավորապես 300—400 հազար ռուբլի։ Կոոպերացիայի առաջ մի լուրջ հարց է դրվում, այն է կանոնավոր ու պատշաճ կերով ոգտագործել այդ ֆոնդերը յեվ կատարել հրահանգված լոզունգը՝ «խեղճերի տնտեսությունների լրիվ կոոպերացում առ 1-ն հոկտեմբերի 1930—31 թ.»։

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՆԱՆՑ ՈՒ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անդրկովկասյան սպառողական կոոպերացիան դեռ շատ չընչին աշխատանք է կատարել կանանց ու յերիտասարդության մեջ։

Գյուղկոոպների և քաղկոոպների տվյալներից՝ չհաշված բանվորական կոոպերացիան՝ յերևում է, վոր 1926 թվին նրանց կողմից կոոպերացման յենթարկված անդամների ընդհանուր թվի 5,8%-ը կազմում են կանայք. 1927 թվին — 8%-ը, իսկ 1928 թվին — 10,4%-ը։ Անդրկովկասյան սպառողական կոոպերատիվների միությունը — Զակսոյուզը ձեռք է առել մի շարք միջոցներ, վորոնք անշուշտ պիտի արագացնեն կանանց կոոպերացման գործի ընթացքը։ Այսպես նա սահմանել է փայերի մաս-մաս մուծելու արտոնությունը, սահմանափակ ապրանքների բաշխումը և այլն... Կանանց կոոպերացման գործի դանդաղ ընթացքը բացատրվում է գլխավորապես կազմբաժինների այդ ուղղությամբ կատարած աշխատանքների թուլությամբ և նրանով, վոր մեր կյանքում դեռ կենդանի և ուժեղ ու «ընտանիքի գլուխ» սովորությունը ու կոոպերացման է յենթարկվում մեծ մասամբ տղամարդը. իսկ ընտանիքի յերկրորդ անդամի կոոպերատիվին անդամագրվելը ավելորդ է համարվում։

• Յեթե վերցնենք նույն կոոպերատիվների ընտրովի որգաններում կանանց մասնակցության թվերը, կտեսնենք, վոր կոոպերատիվների անդամների ընդհանուր թվի համեմատ կանայք կազմում են

	Վարչության մեջ	վերատուգիչ հանձնաժողովի մեջ
1926 թ.	3,4%	3,3%
1927-28 թ.	8,6%	3,9%

Բանվորական կոոպերացիայում խանութների հանձնաժողովների 40%-ից ավելին կազմում են կանայք։

Նկատելի մասնակցություն է ցույց տալիս կինը մանավանդ կոոպերացիայի կուլտ-կրթական աշխատանքներին։ Իսկ կնոջ մասնակցությունը կոոպերխմբերում ու բջիջներում բացառիկ է։ Այսպես 1926 թվին այդ խմբերում մասնակցել են 568 կին. 1927 թվին — 688 կին. իսկ 1928 թվին — 1682 կին։

Կենցաղին վերաբերող աշխատանքները բավական լայն ծավալ են ստացել բանվորական կոոպերացիայում. այնինչ գյուղկոոպներում այդ ուղղությամբ շատ չնչին են աշխատանքները։ 1926-27 թ. ԿասՏՊՈ-յում մենք ունեցինք 2 խաղհրապարակ 110 յերեխայի համար, իսկ 1927-28 թ. 6 խաղհրապարակ 270 յերեխայի համար և մի մանկաբուժական կոլոնիա։

1929 թ. մարտի 8-ին ԿասՏՊՈՆ բաց է անում մի մանկապարտեզ։

Բագ.-ՅՐԿ-ան (Բաղվի բանվորական կենտրոնական կոոպերատիվը) ունեցել է՝ 1926 թ. — 3 խաղհրապարակ 165 յերեխի

համար և մի մանկապարտեզ. 1927-28 թ. — 6 խաղհրապարակ՝ 165 յերեխի համար և 5 մանկապարտեզ, մի խանութ «Մայր և մանուկ» և 3 մանկասենյակ՝ թուրք կանանց ակումբներին կից։

1929 թ. մարտի 8-ին նա բաց է անում թուրքաց շրջանում մի մանկապարտեզ և լվացարան։

Թիֆլիսի Երկրոպը 1927-28 թ. բաց է արել 2 խաղհրապարակ՝ 100 յերեխի համար և մի մանկապարտեզ ու խանութ «Մայր և մանուկ», իսկ մոտ ապագայում էլ նա կբանա դարձյալ մի մանկապարտեզ։

Զակտրոն դեռ նոր է դիմել կենցաղին վերաբերող աշխատանքներին։ Նա բացել է 1 մանկապարտեզ, 1 մանկասենյակ բանվորական ակումբում և մի խանութ «Մայր և մանուկ» (մարտի 8-ին)։ Իսկ ամառը կազմակերպում է 5 խաղհրապարակ և 2 մանկասենյակ՝ յերկաթուղագծի ուղղությամբ։

Գյուղի ցանցով, ուր կենցաշխատանքը բավականին թույլ է, մենք ունենք.

Աղբրեջանի սպառողական կոոպերացիան 1929 թ. մարտի 8-ին կազմակերպելու յե 6 մանկապարտեզ, 3 խաղհրապարակ և 17 խանութ անկյուն «Մայր և մանուկ»։

Վրաստանի սպառողական կոոպերացիան, ուր կենցաշխատանքներն սկսվել են միայն այս տարի (1929 թ.), ունի մանկապարտեզ և «Մայր և մանուկ» անկյուն։ Ծրագրվում է մոտ ապագայում բանալ 5 մանկապարտեզ և 6 խանութ «Մայր և մանուկ»։

Հայաստանի սպառողական կոոպերացիան կազմակերպել է 37 խաղհրապարակ, 6 մանկապարտեզ ու 2 անկյուն «Մայր և մանուկ»։ Բացի այդ, նա կազմակերպում է 5 մանկապարտեզ և 3 անկյուն «Մայր և մանուկ»։

Յերիտասարդության մեջ տարվող աշխատանքը շատ թույլ և դրված։ Գլխավորապես բացակայում է աշխատանքի հաշվառքը։ Անորոշ է յերիտասարդների կոոպերացման տեմպը, ժանավանդ գյուղացիական ցանցում։ ԲաղՅՐԿ-ում 1928 թ. առ 1-ն հունվարի կոոպերացման յենթարկված յերիտասարդների թիվը հասնում է 8750 հոգու կամ 9,27%-ը նրա բոլոր անդամների թվի. իսկ առ 1-ն հոկտեմբերի նույն թվի նրանց թիվը հասել է 18.000 ի կամ 16,66%։ ԿասՏՊՈ-ում յերիտասարդ կոոպերատորների թիվը կազմում է 16,8%-ը անդամ-փայատերերի։

Առանձնահատուկ աշխատանքի մի տեսակն է կոմյերիտական խանութը, որը կոմյերիտների համար փորձնական դպրոցի դեր է կատարում։ Կոմյերիտական խանութների թիվը Անդրկովկասում հասնում է 6-ի, որից 4-ը Բագվում, իսկ 2-ը Թիֆլիսում։ Կոոպերացիան միայն վերջին տարում է սկսել ծավալել իր աշխատանքները կանանց ու յերիտասարդների մեջ և այդ ճակատում նա անկասկած հաղթանակելու յե։

ԿՈՒՅԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կույլտ-կրթական աշխատանքը սպառողական կոոպերացիայում ծավալվում է միայն վերջին յերկու տարում։ Այդ աշխատանքների վերաբերմամբ դեռ չկա մի վերջնականապես կերտված սիստեմ։ Բայց նրա հիմնականը ուղղված է դեպի ուսումնադաստիարակչական և մասսայական կոոպ-կրթական աշխատանքները։

Կոոպերացիայի առաջ դրած կարևոր խնդիրներից գլխավորն է պատրաստել կոոպերատորներ և գիտակից հասարակական գործիչներ։

Այդպիսի աշխատավորներ պատրաստելու հիմնական միջոցներն են կոոպերտեխնիկումները, կոոպերթեքումով տնտեսա-արդյունաբերական տեխնիկումները, Անդրկովկասյան Կոմունիստական Համալսարանին կից կոոպերկուրսերը և Մոսկվա ու Լենինգրադ թոշակավորներ ուղարկելը։

Անդրկովկասում մենք ունենք յերկու մասնագիտական կոոպ-տեխնիկում, որոնք վերջին ժամանակներս են միայն կազմակերպվել։ Մեկը Բագվում (այս տարի յե բացվել), որն ունի 142

ունկնդիրներ, իսկ յերկրորդը Յերևանումն է, վորն արդեն յերկու տարվա գոյություն ունի և վորի ունկնդիրների թիվը հասնում է 120-ի։

Դժվար է ասել, թե ինչ կտան այդ տեխնիկումները, մանավանդ Յերևանինը, վորը դեռ ևս թույլ է աշխատում։ Բայց, այնուամենայնիվ, դրանք միակ կազմակերպություններն են, վորոնցում տեղի յե ունենում վոչ միայն կոոպերացիայի հիմնական սկզբունքների ուսումնասիրումը, այլ և տարվում են քիչ թե շատ բավարար փորձնական աշխատանքներ։

Վրաստանում կա 4 կոոպերթեքումով տնտեսա-արդյունաբերական տեխնիկում, վորոնք ամեն տարի տալիս են 60 յերիտասարդ կոոպերատորներ։

Բացի այդ, թե Վրաստանում և թե Հայաստանում կան ինստիտուտներ՝ կոոպեր-մասնագիտական թեքումով։ Դժբախտաբար, վոչ կոոպերկազմակերպությունները, վոչ էլ Լուսժողկոմատը փորձնականապես չեն ոգտագործում այդ թեքումները, և այդ դպրոցները չեն տալիս մեզ անհրաժեշտ կոոպերատորներ։

Անդրկովկասյան Կոմունիստական Համալսարանին կից կոոպերդասընթացները՝ 48 ունկնդիրներով՝ նույնպես թույլ են աշխատում. և ամբողջ կազմից մեր կոոպերացիան կարող է ստանալ հազիվ 30 փորձված ու պատրաստված աշխատավորներ։

Միաժամանակ Մոսկվայի ու Լենինգրադի կոոպեր-բարձր դպրոցներում սովորում են մոտ 40 հոգի—սպառողական կոոպերացիայի թոշակավորներ։

Այդպիսով Անդրկովկասի սպառողական կոոպերացիայի համար պատրաստվում են 410 յերիտասարդ կոոպերատորներ։ Բայց սպառողական կոոպերացիան զբաղված է նաև իր աշխատակիցների վերապատրաստումով։ Այդ ուղղությամբ աշխատանքները բավական լայն ծավալ են ստացել։

Հետևյալ աղյուսակը պարզ ցույց է տալիս կոոպեր-դասընթացների ու նրանց լսողների քանակի աճումը խոշոր բանկոոպներում։

Աղյուսակ № 37.



Ավելի ևս խոշոր ծավալ է ստացել նման աշխատանքը հանրապետությունների միությունների։

Աղյուսակ № 38.



Բայց կոոպերացիան, վորն իր աշխատանքը տանում է՝ հենվելով անդամների մասսային, չի կարող բավականանալ միայն իր ծառայողների վորակը բարձրացնելու և նրանց վերապատրաստելու գործով։ Անհրաժեշտ է պատրաստել և վերապատրաստել անդամների մասսան։ Ցեվ ահա սկսում են մեծ աշխատանք տանել՝ վերացնելու կոոպերատիվի անդամների անգրագիտությունը։ Ահա մի աղյուսակ, վորը ցույց է տալիս անգրագիտությունը վերացնելու համար կազմակերպված խմբերի և նրանց անդամների աճման թվերը խոշոր բանկոոպներում։

Աղյուսակ № 39.



Նույն ուղղությամբ կատարած աշխատանքի պատկերը հանրապետությունների միությունների մեջ։

Աղյուսակ № 40.



Դեռ 1926 թվին կոոպմիությունները վոչ մի աշխատանք չեյին տարել այդ ուղղությամբ։ Այս տարի (1929 թ.) այդ գործը մեծ ծավալ է ստանում։

Թե աշխատակիցներ պատրաստելու ու կոոպերծառայողներին վերապատրաստելու գործի և թե կոոպերխմբակային աշխատանքների թերությունը բացատրվում է տեղական լեզուներին տիրապետող պատրաստված ղեկավարների բացակայությամբ։ Ցեվ իրավացի յեն Ադրբեջանի ու Հայաստանի կոոպերմիությունները, յերբ կազմակերպում են դասընթացներ կոոպխմբերի ղեկավարներ պատրաստելու համար։

Զգալի յեվ խոշոր պակաս ե զգացվում նաև տեղական լեզուներով հրատարակված կոոպերգրականության։

Յեթե ուսումնա-դասընթացային աշխատանքը անդրադառնում ե սիստեմայի նախագծում, յեթե դասընթացներին վերաբերող միջոցների քանակը տարեց տարի ավելանում ե, ըստ վորում հնարավորություն ե ստացվում վերապատրաստել կոոպերատիվ ապպարատի նոր ու նոր խմբեր, ապա մասսայական աշխատանքը շատ թույլ ե դրված։ Բանվորական կոոպերացիայի ցանցով միայն ԲագՅՐԿ-յում ու ԿասՏՊՈ-յում ե նկատվում՝ վոչ միայն մասսայական աշխատանքի կատարումը, այլ և նրա առանձին ձևերի ուսումնասիրումը ու այդ աշխատանքների մուծումը նախագծի մեջ առանձին առանձին հիմնարկությունների վերաբերմամբ։ Թիֆլիսի Երկոոպում ու Յերևանի բանկոոպում մասսայական աշխատանքները կրում են պատահական բնույթ, նախագծի մեջ չեն կիրառվում և նրանց աշխատանքի վորակն ու չափը շատ թույլ և նվազ կերպով կարելի յե պատկերացնել։

Կոոպերուսումնա-կրթական մասսայական աշխատանքների դրությունը բանվորական կոոպերացիայում, ուր մտնում են ԲագՅՐԿ, ԿասՏՊՈ, Թիֆլիսի Երկոոպը ու Յերևանի Բանկոոպը, պարզ յերևում ե հետևյալ թվերից.

Բանվորական կոոպերացիան	1926 թ.	1927 թ.	1928 թ.
Դասախոսություններ ու զրույցներ . . .	44	508	1.360
Կոոպերեկոներ (հարց ու պատասխաններ) .	24	74	167
Վիճակախաղեր	1	68	177
Զբոսանքներ (եքսկուրսիաներ)	3	29	94
Կոոպանկյուններ	5	29	63
Կինոներ	21	59	117

Յեթե բանվորական կոոպերացիայում կոոպկրթական մասսայական աշխատանքներն անհրաժեշտ ծավալ չեն ստացել, ապա գյուղում նրանք ավելի ևս թույլ են։ Վրաստանում այդ աշխատանքները դրված են 63 կետում. Հայաստանում նույնպես 63 տեղ. Ադրբեջանում — 70 կետի շուրջն ե կազմակերպված։ Աղերիտիֆակի (Ադրբեջանի միություն) կատարած զանազան տեսակի աշխատանքների մասին տեղեկություններ չկան։ Իսկ Ցեկավշիրիի (Վրաստանի միություն) և Հայկոոպի (Հայաստանի միության) տվյալները, վորոնք վերաբերում են յերկու տարվա աշխատանքներին, ցույց են տալիս հետևյալը.

Հանրապետությունների միությունները	1927 թ.	1928 թ.
Դասախոսություններ ու զրույցներ	240	7,45
Կոոպերեկույթներ (հարց ու պատասխաններ) . . .	158	485
Ագիտպատարաններ	46	195
Զբոսանքներ (եքսկուրսիաներ)	20	65
Կոոպներկայացումներ	41	85
Կինոներ (շարժանկարներ)	232	2200
Կոոպանկյուններ	124	308

Կուլտ-կրթական աշխատանքների համար կոոպերացիան հատկացնում ե գումարներ, վորոնք տարեց տարի աճում են։ Ահա այդ գումարների թվերի աճումը միայն 4 խոշոր բանկոոպում և 3 կոոպերմիության մեջ։

Ընթացիկ (1929 թ.) տարում կուլտ-կրթական աշխատանքի համար կհատկացվեն խոշոր գումարներ, վորոնք անդրկովկասյան սպառողական կոոպերացիայի ամբողջ ցանցում կկազմեն ավելի քան 1.500.000 ռուբլի։ Այդ գումարները հարկավոր ե կա-

Աղյուսակ № 41.



նոնավոր և պատշաճ կերպով ծախսել։ Կոոպեր-մասսայի ուշադրությունը պիտի ուղղված լինի դեպի այն, թե ինչպես են ծախսվում կույլտ-կրթական նպատակին հատկացված գումարները։

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ (ԿԱՄՊԱՆԻԱ)

Սպառողական կոոպերացիան միացնում է գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին ու արհմիությունների անդամների համարյա $^3/_4$ մասը։ Այդ դարձնում է կոոպերացիան խոշոր հասարակական ույժ և առաջադրում է ավելի խոշոր հարցեր նրա հաշվետվության ու վերընտրական պայքարի (կամպանիա) միջոցին, որը մոտ ժամանակում պիտի ծավալվի Անդրկովկասի սպառողական կոոպերացիայի ամբողջ ցանցում։

Գյուղացիական կոոպերացիայի կյանքում շատ ուժեղ կերպով բնորոշվում է գյուղի դասակարգային խմբավորումների կռիվը։ Ուստի գյուղացիական կոոպերացիայի վերընտրական պայքարն ստանում է քաղաքացիական ու հասարակական ավելի լայն նշանակություն։ Մինչև 1927-28 թ. հաշվե-վերընտրական պայքարը քիչ թե շատ կազմակերպված ձևով տարվում ևր միայն բանվորական կոոպերատիվներում։ Այդ պայքարն անցյալ 1927-28 թվին անդրկովկասյան սպառողական կոոպերացիայի - ամբողջ ցանցում տարվել է բավական կազմակերպված։

Անդամները մասնակցեցին ընդհանուր ժողովներին 70-90%։ Ամբողջ պայքարը տարվեց կոոպերատիվ, կուսակցական, արհմիության և այլ հասարակական կազմակերպությունների կազմակերպված ղեկավարությամբ, առաջնորդվելով ինքնաքննադատության լոզունգներով։ Նորընտիր վարչությունների և վերատեսուչ հանձնաժողովների կազմի մեջ զգալի թվով մտան չքավորներ, բանվորներ, կուսակցականներ, կանայք և կոմյերիտներ։ Բայց գալիք վերընտրությունները պիտի տան բոլոր անդամների՝ բանվորների ու գյուղացիների (չքավորների, միջակների ու գեղջուկների) այնպիսի միացում, որը վոչ միայն հետ մղե կուլակներին ու նեպմաններին կոոպերացիայից, այլև խոպառ արտաքսի կապիտալիստական տարրերին կոոպերացիայի որգաններից։ Ներկա տարվա վերընտրություններին հարկավոր է ավելի ևս աչալուրջ ստուգել վարչության, վերատեսուչ ու խանութների հանձնաժողովների կազմերը, որպեսզի կարելի լինի դուրս կորզել կոոպերացիայից խորհր. իշխանությանը հակառակ բոլոր տարրերին. մերկացնել գեղծումները, վատնումներն ու շռայլումները. մաքրել կազմակերպությունը և մտցնել սոցիալական տեսակետից մեզ հարազատ, մաքուր, ակտիվ և վստահավոր ու փորձված ընկերների՝ բանվորներ, չքավորներ, միջակներ, գեղջուկներ, ծառայությունից վերադարձած կարմիր-բանակայիններ,— ահա այն միջավայրը, որտեղից պիտի վերցնել կոոպերացիայի նոր ղեկավարներին։ Վերընտրական պայքարի ժամանակ անհրաժեշտ է առաջադրել նաև կնոջ թեկնածությունը՝ կոոպերացիայում աշխատելու համար։

Ամեն մի կոոպերատիվի վարչության կամ վերատեսուչ հանձնաժողովի կազմերի մեջ պիտի լինի մի-յերկու կին։ Շատ կարևոր է առաջադրել վարչության, վերատեսուչ ու խանութների հանձնաժողովների կազմերի մեջ այն յերիտասարդներին, որոնք գեղջուկների, չքավորների ու միջակների ծագումից են։

Հաշվե-վերընտրական պայքարի հաջողությունը կախված կը լինի նրանից, թե ինչպես կազմակերպված ու ակտիվ կմասնակցի պայքարին կոոպերատիվի անդամը։

Այս տարի վերընտրական պայքարը կոոպերացիայում պետի յենթարկի ամենախիստ ստուգման վոչ միայն կոոպերացիայի տնտեսական գործունեությունը, այլև նրա կուլտ-կրթական և կենցաղային աշխատանքները։

Վորքան հոծ բազմությամբ կատարվի անդամների մասնակցությունը սպառ. կոոպերացիայի հաշվե-վերընտրական պայքարին, վորքան ակտիվ ու կազմակերպված կատարվի նրա (մասսայի) մասնակցությունը, այնքան հիմնավոր և հաջող կդարձնա ու կը ծավալվի կոոպերացիայի ապագա աշխատանքը։

ՀԱՇՎԵ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԻ ՑՈՒՅՑ Է ՍՊԱՌ. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ.

ԳԵՂՋՈՒԿՆ ՈՒ ՁՔԱՎՈՐԸ ՄԻԱՑԱԾ ՄԻՋԱԿՆԵՐԻ ՀԵՏԴԵՊԻ ԿՈՒՎ ԿՈՒԼԱԿՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ.

ՎՈՉ ՄԻ ՍՊԱՌ. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ՆԱԽԱԳԾՎԱԾ ԿՈՒՅԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ.

ԸՆՏՐԵՑԵՔ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵՋ ԱՁՆԻՎ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ.
Անդրկով. Սպառ. կոոպերացիան մինչև հոժարակամ անդամագրության որենքը	3
Անդրկովկ. սպառ. կոոպերացիայի զարգացումը 1924 թվից մինչև 1928 թ.	
1. Կազմակերպչական շինարարություն	7
2. Առևտրական աշխատանքը	17
3. Սպառողական կոոպերացիայի մրջոցները	37
4. Հասարակական և կուլտ-կրթական աշխատանքը	49

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ՀԱՅ ԵՎՈՒՄԵՐԻ
ZUUՌ-Արմ ՍՍՀ
Ա. ԽՄ. Ա. ՄԱՍՈՒՄՅԱՆ
ՄՕՍԿՎԱ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0203286

9-331
25 ЦПЯ.
Сальб
1
1
607